

լեն ի դարմանոյ ցորենոյն եւ որոմն ընդ նմին ի ցաւդս եւ յանձրեւս եւ յոռոգմունս, եւ ի ջերմութիւնս խարակեալ եւ ի հեշտ արեւս արեգականն: 32 Այսպէս այս լինի մինչեւ ի ժամանակս հնձոց, մինչեւ եկեսցէ ժամանակն յորժամ հնձեսցի ցորեան արմտեացն. զայն ի շտեմարանս արքայութեանն ժողովեցեն, եւ զորոմն յայրումն յաւիտենական հրոյն. որ է ինքն հունձք կատարած ժամանակաց, յորժամ Որդին Աստուծոյ եկեալ հասանիցէ, եւ տացէ հրաման երկնաւոր մշակացն ընդ նմա իջելոց ի վերուստ՝ ի գերեզմանացն հնձել զամենայն ննջեցեալսն յարուցեալս:

33 Արդ այնուհետեւ ընդորութիւն առնիցէ. զարդարսն նման ցորենոյ ընդ ինքեան յարքայութիւնն իւր ընդունիցի, եւ զմեղաւորսն որոման նմանեալս՝ յանշեջ ի յաւիտենական ի հուրն հրամայիցէ արկանել: 34 Արդ այժմ ժամանակն հնձոց չեւ եւս էր, դու կանուխ քաղահան որոմանն ի ցորենոյն արարեր, եւ կանուխ զորոմնն ի մի վայր առանց ցորենոյն ժողովեցեր. վասն այդորիկ յայնժամ կանխեաց հուրն, անխնայ յարձակեցաւ այրել, զամենայն որոմանն ի մի վայր ժողովեալս ի միում վայրի գտեալս միահաղոյն վաղճանեաց: 35 Այլ այր դու, տես զանձն քո, զի մի՛ եւ դու կորիցես, եւ աշխարհս վասն քո: 36 Իսկ թագաւորն ի գունճս հարեալ, մեծաւ աղաչանաւք եւ բազում աղաւթերաւք աղաչէր թագաւորն՝ հաշտել ընդ նմա. եւ եղ ուխտ, զի այլ ոչ եւս երբեք անցցէ զքանիւք նորա:

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Յաղագս Հայր մարդպետին, յորժամ եկն էջ ի գաւառն Տարաւնոյ՝ եթէ զիա՛րդ եկն ել ի տեղի աղաւթիցն Աշտիշատ¹, կամ զիա՛րդ դատապարտեալ գնաց անտի յիւրոյ բերանոյն ի խաւսիցն. կամ զիա՛րդ անկեալ, մահուն պարտ եղեալ, սատակեցաւ ի Շաւասպայ Արծրունւոյ:

2 Եւ էր մարդպետն Հայր այր չար եւ ժանտ բարոյիւք, անաւրէն եւ անիրաւ քան զառաջին Հայր անուն մարդպետսն²: 3 Սա կոտորեաց զամենայն ազգս նախարարացն ի ժամանակս թագաւորութեանն Տիրանայ արքայի. եւ տոյնպէս առ թագաւորութեամբն Արշակայ՝ եւս չար քան զառաջինն գործել չար առ ամենայն մարդ: 4 Արդ ելանէր սա շրջեր ընդ մարդպետութիւնն իւր. ապա եկն էջ Հայր մարդպետ ի գաւառն Տարաւնոյ ընդ իւր գեւղսն տեսանել:

5 Չայնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջեր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն. զի հնգետասան գաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին

1 Օրինակ մի՛ Աշտիշատայ

2 Օրինակ մի՛ մարդպետն